

ԳԱԼՈՒՍՏ ԿՈՍՏԱՆԴԵԱՆԻ ԴՐԱՊԱՇՏ ԱՇԽԱՐՀԱՅԵԱՑՔԸ ԵՒ ԴԵՐԸ ՕՍՄԱՆԵԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ՃԱՆ ԷՐԶՈՒՐՈՒՄԼՈՒՕՂԼՈՒ (canerzurumluoglu@hotmail.com)

ԴՐԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ

Օկիաթ Քոնթ (1798-1857), ֆրանսական յեղափոխութեան յաջորդող ճգնաժամային տարիներուն կը զարգացնէ փիլիսոփայական դրութիւն մը, զոր կը կոչէ «դրական փիլիսոփայութիւն», որ ընկերային խնդիրներու լուծումը կը գտնէ գիտական մտքի պաշտպանութեան մէջ՝ ի դէմս աստուածաբանութեան ու բնագանցութեան: Այս փիլիսոփայական ըմբռնումը, ըստ Քոնթի, կը բխի Ֆրենսիս Պէյքընի¹, Րընէ Տեքարթի² եւ Կալիլէոյի³ հայեացքներէն եւ անընդհատ զարգացող մարդկային մտքի վերջին հանգրուանն է: Քոնթ նաեւ կը հիմնէ միութիւն⁴ մը՝ իր փիլիսոփայութիւնը տարածելու համար, որով դրապաշտութիւնը արձագանգ կը գտնէ նաեւ Ֆրանսայէն դուրս:

Քոնթ կը նշէ, որ շատ նմանութիւններ կան Նիւթընի⁵ բնափիլիսոփայութեան եւ դրական փիլիսոփայութեան միջեւ, բայց ինք չէ նախընտրած իր համակարգը անուանել «բնափիլիսոփայութիւն» կամ «գիտութիւններու փիլիսոփայութիւն», որոնք չեն պատշաճիր իր հայեացքները ընդգրկող բոլոր երեւոյթները ճշգրտօրէն բնորոշելու համար, մանաւանդ որ դրական փիլիսոփայութիւնը կ'ընդգրկէ նաեւ ընկերային երեւոյթներ⁶:

Մարդկային բանականութիւնը միասնաբար կ'օգտագործէ տրամաբանումն ու դիտարկումը՝ ուսումնասիրելու համար երեւոյթներու իսկական օրէնքները եւ կ'ընդունի բացարձակ ճշմարտութիւններու անհնարինութիւնը:

Քոնթի համաձայն, վերջին հինգհարիւր տարուան ընթացքին աստուածաբանական փիլիսոփայութիւնը, անդառնալիօրէն փլուզուած է: Իսկ այդ փիլիսոփայութեան վրայ հիմնուած քաղաքական համակարգը, ենթարկուած է արմատական լուծարման: Ի վերջոյ անկարելի դարձած է պահպա-

¹ Ֆրենսիս Պէյքըն (1561-1626).- անգլիացի փիլիսոփայ եւ քաղաքական գործիչ:

² Րընէ Տեքարթ (1596-1650).- ֆրանսացի փիլիսոփայ եւ մաթեմատիկոս:

³ Կալիլէօ Կալիլէի (1564-1642).- իտալացի աստղագէտ:

⁴ Société Positiviste, հիմնուած է 1848ին Քոնթի կողմէ:

⁵ Այզաաք Նիւթըն (1643-1727).- անգլիացի բնագէտ, ուսողագէտ եւ աստղագէտ:

⁶ «Նախաբան», Auguste Comte, *Cours de Philosophie Positive*, հյոր. Ա., Rouen Frères, Libraires-Éditeurs, Paris, 1830, էջ 8:

նել հին վարչակարգը եւ տեղի ունեցած է Մեծ Ճգնաժամը՝ 1789ի յեղափոխութիւնը⁷:

Քոնթ կը մտածէ, որ ժամանակակից հասարակութիւնը ճգնաժամի մէջ է. ընկերային խառնաշփոթութիւնները յառաջ կու գան անհետացող աստուածաբանական եւ զինուորական հասարակարգի ու զարգացող գիտական եւ ճարտարարուեստական հասարակարգի միջեւ գոյութիւն ունեցող հակասութիւններէն: Ճգնաժամը կը դադրի, երբ գիտական միտքը կը ստանձնէ աստուածաբանական մտքի անցեալի դերակատարութիւնը՝ պահպանել հասարակարգը⁸: Ըստ Քոնթի, գիտական եւ ճարտարարուեստական հասարակարգի յաղթանակը անխուսափելի է, քանի որ պատմական անհրաժեշտութիւն է, զոր սակայն կարելի է դանդաղեցնել կամ արագացնել⁹:

ԴՐԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՓՈՒՄՆԵՐԸ ՕՍՄԱՆԵԱՆ-ԹՐՔԱԿԱՆ ՄՏՔԻՆ ՀԵՏ

Դրապաշտութիւնը օսմանեան թուրք մտաւորականութեան մօտ կը համարուէր փլուզուող օսմանեան պետութիւնը փրկելու միջոց¹⁰: Ուստի, քաղաքական պատճառները կարելոր դեր խաղացին օսմանեան քաղաքական եւ մտաւորական շրջանակներու մէջ դրապաշտութեան տարածման:

Դրապաշտները կը փորձեն իրենց գաղափարները տարածել օսմանեան հողերու վրայ: Քոնթ նամակներ կ'ուղարկէ Մուպթաֆա Ռեշիտ փաշային¹¹՝ ներկայացնելով դրապաշտութիւնը իբրեւ «մարդկութեան կրօնք»¹²: Բայց այս նախաձեռնութիւնը դրական արձագանգ չի գտներ: Ուրոշ դրապաշտներ, որոնք ջանքեր իզործ կը դնէին իսլամ ժողովուրդներու մէջ դրապաշտութեան տարածման համար, 1877ին կ'այցելէն Միտհաթ

⁷ Auguste Comte, *Traité Philosophique d'Astronomie Populaire*, Carilian Goeury et Vor Dalmont Éditeurs, Paris, 1844, էջ 50:

⁸ Նոյն, էջ 85:

⁹ Raymond Aron, *Les Étapes de la Pensée Sociologique*, Gallimard, 1967, էջ 80-81:

¹⁰ Այդ մտաւորականներէն են, օրինակ՝ Պեշիր Ֆուատ, իսկ անելի ուշ՝ երիտթուրքերը, որոնց գործունէութիւնը կը սկսի Կոստանդէանէն ետք:

¹¹ Մուստաֆա Ռեշիտ Փաշա (1800-1858).- թանգիմարեան շրջանի օսմանեան քաղաքական գործիչ:

¹² 4 Փետրուար 1853 թուակիր նամակին մէջ Քոնթ կը նշէ, որ իսլամական հաւատքը անելի յարմար է դրապաշտութեան համար, քանի որ այն անելի պարզ է, քան կաթոլիկութիւնը (նկատի ունենալու է քրիստոնէութիւնը ընդհանրապէս) եւ կ'արտայայտէ իր համոզումը, որ դրական կրօնքը աջակցութիւն կը գտնէ մահմետականներու մօտ (Auguste Comte, *Système de Politique Positive, ou Traité de Sociologie, Instituant la Religion de l'Humanité*, Paris, 1853, էջ 47-49. նաեւ՝ Robert H. Hewsen, *Tarihi Kentler ve Ermeniler: İzmir*, ed. Richard G. Hovannisian, «Ege'deki Ermeniler», չեւ.: Aras Ergünes, Aras Yayincılık, 2018, İstanbul, էջ 51:

փաշային¹³, երբ ան կը գտնուէր Փարիզ եւ կը ինքնաբնութագրեն իբրեւ կրօնական եւ էթնիկ նախապաշարումներէ ազատ մարդիկ: Անոնք կը ներկայացնեն դրապաշտութիւնը, կը նշեն որ Օսմանեան Կայսրութիւնը մեծ ծառայութիւններ մատուցած է մարդկութեան, ի տարբերութիւն ցարական Ռուսաստանին՝ կրօնական, լեզուական եւ այլ ազատութիւններ տուած է փոքրամասնութիւններուն: Կը յայտնեն իրենց մտահոգութիւնը համապատասխանութեան եւ համագերմանականութեան սպառնալիքի դէմ: Այս սպառնալիքի դէմ յոյս կը յայտնեն Անգլիոյ, Աստրիա-Հունգարիոյ եւ Օսմանեան Կայսրութեան (նաեւ Սպանիոյ ու Իտալիոյ հաւանական) միասնութեամբ կազմուած դաշինքի մը գոյութեան: Կը նշեն, որ իրենք կը պաշտպանեն *status quo*-ն: Կը յայտնեն յատկապէս, թէ իրենք կողմնակից են Օսմանեան Կայսրութեան տարածքային ամբողջականութեան:

Միտհաթ փաշան կը կիսէ իրենց մտահոգութիւնը Ռուսիոյ մասին, կը քննադատէ Եւրոպայան՝ Օսմանեան Կայսրութեան դէմ ցուցաբերած ամբաստանական վերաբերումի համար՝ յայտնելով նաեւ իր հիացումը անոր ազատական կառոյցներուն¹⁴:

Օսմանցի թուրք առաջին դրապաշտ մտաւորականը Պեշիր Ֆուատն է, որ առաւելաբար կը հետաքրքրուէր դրապաշտութեան գիտական մտքին վերաբերող ուսմունքով: Ֆուատ դրապաշտութեան յառաջդիմութեան գաղափարը կ'ընկալէր որպէս նիւթական յառաջդիմութիւն:

Պեշիր Ֆուատ (1852-87) այն կարեւոր մտաւորականներէն է, որ լուրջ ներդրում ունեցած է յետթանգիմութեան շրջանի օսմանեան փիլիսոփայական մտքին: Իր ուսումը ստացած է Յիսուսեան Հայրերու մօտ: Դրապաշտութեան եւ գիտական աշխարհայեացքի անզիջող ջատագով Ֆուատ՝ յատկապէս պարբերականներու իր յօդուածներուն մէջ քննադատած է բնագանցութիւնը, պաշտպանելով այն տեսակէտը թէ հասարակութիւնը կրնայ լուսաւորուիլ միայն գիտութեամբ: Ըստ իրեն, փիլիսոփայ ըլլալու պայմանը գիտական պատրաստութիւն ունենալն ու աշխատանք կատարելն է¹⁵: Որովհետեւ ան կը հաւատար, որ փիլիսոփայութիւնը բաղկացած է բոլոր գիտութիւններու զումարումէն¹⁶: Իր մտածողութեան վրայ ազդե-

¹³ Միտհաթի Փաշա (1822-1884).- օսմանեան քաղաքական գործիչ: Մեծ դեր խաղացած է 1876ին հռչակուած օսմանեան սահմանադրութեան պատրաստման մէջ:

¹⁴ *Adresse des Positivistes à Midhat-Pacha, Ancien Grand-Vizir de l'Empire Ottoman*, P. Ritti, Փարիզ:

¹⁵ M. Orhan Okay, *Beşir Fuad - İlk Türk Pozitivist ve Naturalisti*, Dergah Yayinlari, İstanbul, Mart. 2012, էջ 170-71:

¹⁶ Նոյն, էջ 179:

ցութիւն ունեցած են ֆրանսացի լուսաւորիչները¹⁷, դրապաշտ փիլիսոփաներ Քոնթ, Լիթրէ¹⁸ եւ նիւթապաշտ Պիլանէր¹⁹:

Պարբերականներու յօդուածներէն դուրս Ֆուատի փիլիսոփայական միակ աշխատանքը Վոլթէրի մասին մենագրութիւնն է, զոր աւարտած է 1886ին²⁰: Ասիկա Վոլթէրի մասին գրուած ամէնէն մանրամասն թրքերէն մենագրութիւնն է օսմանեան շրջանին²¹: Մենագրութենէն հնարաւոր է հետեւիլ Ֆուատի կրօնական եւ փիլիսոփայական տեսակէտերուն, ուր ան կը յայտարարէ թէ քրիստոնէութիւնը յետադիմական դեր խաղացած է մարդկութեան յառաջդիմութեան մէջ, բայց Սպանիոյ մէջ իսլամի եւ քրիստոնէութեան համադրութեամբ յառաջ եկած է Վերածնունդը: Ֆուատի քննադատութիւններուն կիզակէտն է քրիստոնէական մոլեռանդութիւնն ու հաւատաքննութիւնը. ան տեղ կը յատկացնէ արեւմուտքի մէջ կրօնական անհանդուրժողութեան դէմ պայքարող մտաւորականներուն: Ֆուատ, քրիստոնէայ արեւմուտքէն բերած օրինակներով հաւանաբար կ'ուզէր թաքուն կերպով հարուածել օսմանեան ընկերային կեանքին մէջ նաեւ իսլամ կրօնաւորներու ճնշումը:

Ֆուատ հրատարակած է նաեւ հեղինակային կամ թարգմանական գիրքեր եւ յօդուածներ բնախօսութեան, բժշկութեան, գրականութեան, թատրոնի, նշանաւոր մարդոց կենսագրութեան, լեզուի ուսուցման, զինուորական ծառայութեան վերաբերեալ: Ասոնց մէջ *Պեշէրը* (Մարդ) (1885), որ գիտական բնոյթ ունէր, յատկապէս ուշագրաւ է մեր նիւթի առումով: Ֆուատ այնտեղ կը քննարկէ բնախօսական եւ մարդաբանական հարցեր: Գիրքին ներածութիւնը կը սկսի Սփենսըրի²² գիտութիւններու դասակարգումով: Ֆուատ կը հետեւի ԺԹ. դարու դրապաշտ բժիշկ-գիտնական Քլոտ Պերնարին, պնդելով թէ կենսաբանութիւնը ենթակայ է նիւթի օրէնքներուն ինչպէս բնագիտութիւնը եւ տարրաբանութիւնը, եւ ճիշտ չէ մարմնի եւ կեանքի մէջ բնազանցական տարրեր փնտռել²³:

ԴՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՅԵՐՈՒ ՄԷՋ

Դրապաշտութիւնը օսմանեան հայերու մէջ սկսած էր արձագանք գտնել. ան որոշ շրջանակներու համար գիտական մտքին համարժէք կը

¹⁷ ԺԸ. դարու ֆրանսացի որոշ փիլիսոփաներ, որոնք կը պաշտպանէին անհատի ազատութիւնը եւ կը պայքարէին կրօնական անհանդուրժողութեան դէմ:

¹⁸ Émile Littré (1801-1881).- Քոնթի հետեւորդ, ֆրանսացի դրապաշտ փիլիսոփայ:

¹⁹ Okay, էջ 169: Ludwig Büchner (1824-99).- նիւթապաշտ գերմանացի փիլիսոփայ:

²⁰ Okay, էջ 166:

²¹ Remzi Demir, *Philosophia Ottomanica-Osmanli Felsefesi*, Lotus Yayinlari, İstanbul, 2018, էջ 452:

²² Herbert Spencer (1820-1903).- անգլիացի փիլիսոփայ, կենսաբան, մարդաբան եւ ընկերաբան:

²³ Okay, էջ 98-99:

համարուէր եւ կը ներկայացնէր նորն ու յառաջդիմականը: Այս փիլիսոփայութեան հետեւող հայերը կը հաւատային, որ ընկերային զարգացումը տեղի պիտի ունենար դրապաշտութեամբ: 1870ականներէն իվեր հայկական պարբերականներու մէջ կը նկատուէր գիտական յօդաւածներու եւ թարգմանութիւններու զգալի աճ: Գալուստ Կոստանդեանի, Եղիա Տէմիրճիպաշեանի²⁴, Մսեր Մսերեանի²⁵ նման դրապաշտ հակումներով մտաւորականներ ջանքեր կը գործադրէին տարածելու համար գիտական այս միտքը²⁶: Կոստանդեան հրատարակած էր *Մէթոքի վրան*, որուն մէջ մեծ ոգեւորութեամբ կը պաշտպանէր դրապաշտ գաղափարները եւ գիտական մեթոտը: Տէմիրճիպաշեան լոյս ընծայած էր *Գրական եւ իմաստասիրական շարժում* հանդէսը՝ դրապաշտութիւնը ծանօթացնելու համար հայերուն: Տէմիրճիպաշեան համոզուած էր, որ ազգային հաստատութիւնները կը զարգանան դրապաշտութեան տարածմամբ, հետեւաբար կը պահանջէր, որ դրական գիտութիւնները աւելի լայն տեղ գտնեն հայկական դպրոցներէն ներս: Այս հանդէսէն բացի լոյս կը տեսնեն նաեւ Մսերեանի *Մեքեօրան*, ուր լայն տեղ տրամադրուած էր դրական փիլիսոփայութեան, եւ Նազարէթ Տաղաւարեանի²⁷ *Գիտական շարժումը*, որ կը բովանդակէր առաւելաբար գիտական յօդուածներ:

Միս կողմէ, պահպանողական շրջանակներու համար դրապաշտութիւնը անկրօն փիլիսոփայութիւն էր կամ անհաւատութեան յանգեցնող միջոց: Յիրաւի, Կոստանդեանի *Մէթոքի վրան* մեծ անհանգստութիւն կ'առաջացնէ կրօնական եւ պահպանողական շրջանակներու մէջ, որոնք խստորէն կը քննադատեն Կոստանդեանը, պնդելով որ գիրքը ունի անաստուածեան բովանդակութիւն:

ԳԱԼՈՒՍՏ ԿՈՍՏԱՆԴԵԱՆ

Կոստանդեանի ընտանիքը գործուն մասնակցութիւն կը բերէր Զմիւռնիոյ փոքր հայկական համայնքին՝ ԺԹ. դարու առաջին քառորդին²⁸: Հայ-

²⁴ Եղիա Տէմիրճիպաշեան (1851-1908).- հրապարակագիր, արձակագիր, բանաստեղծ, կրթական մշակ եւ փիլիսոփայ:

²⁵ Գրիգոր Մսերեան (1846-93).- զմիտնիաւիայ մտաւորական, խմբագիր, թարգմանիչ:

²⁶ Տ. Է. Յարութիւնեան, «Պոզիտիւիզմի մուտքը հայ իրականութիւն եւ պայքարը նրա գնահատման շուրջ», *Բանբեր Երեւանի Համալսարանի*, 3(63):1987, էջ 183-84:

²⁷ Նազարէթ Տաղաւարեան (1862-1915).- հասարակական գործիչ, խմբագիր եւ բժիշկ:

²⁸ Զմիւռնիան իր հարուստ մշակութային կեանքով հանդիսացած է հայ լուսաւորութեան կարեւոր կեդրոններէն մէկը: Յոյները, հայերը, հրեաները, թուրքերը, լեւանթները եւ եւրոպացիները կազմած էին այս բազմերանգ քաղաքը: Հայերը, հակառակ անոր, որ բնակչութեան փոքր տոկոսը կը կազմէին,

րը՝ Գրիգոր, յայտնի մտաւորական էր, կատարած թարգմանութիւններ աւելցնելու համար՝ որուն բարեւաման ջանադիրներէն էր: Հետաքրքրուած էր նաեւ ընկերային խնդիրներով եւ կ'աջակցէր անոնց, որոնք զբաղուած էին գիտութեամբ: Մայրը՝ Հռիփսիմէ, նոյնպէս Զմիւռնիոյ հայ համայնքի յառաջադէմ կիներէն էր: 1845ին հրդեհի զոհ գացած Հռիփսիմեանց օրիորդաց դպրոցը, որ վերանորոգուած էր 1849ին, Հռիփսիմէի աջակցութեամբ օժտուած էր եւս երկու յարկերով²⁹: Կոստանդեանի եղբայրներէն մէկը Վոլթերի համակիր յայտնի բժիշկ մըն էր³⁰:

Ընտանիքի միջնեկը՝ Գալուստ, ծնած է Զմիւռնիա, 1840ին, ստացած որակաւոր կրթութիւն եւ երիտասարդ տարիքին հնարաւորութիւն ունեցած հօր հետ մեկնելու Եւրոպա: Գալուստ որ կը կարդար անգլերէն, ֆրանսերէն, իտալերէն, գերմաներէն եւ յունարէն լեզուներով³¹, 15 տարեկանին կը

ուշագրաւ գործունէութիւն կը ծաւալէին առեւտուրի, կրթութեան, մշակոյթի եւ հրատարակչութեան ոլորտներէն ներս: Զմիւռնիահայերը ունէին թանգարան, գրադարան, հիւանդանոց, հոգեբուժարան, թատրոն, ուր ֆրանսական ներկայացումներ կը տրուէին 1836էն ի վեր: Զմիւռնիոյ հայ համայնքը կը փայլէր ֆրանսախօս վերնախաւով: Այս վերնախաւը հայ լուսաւորութեան ռահվիրան եղած է յատկապէս 1825-1860 շրջանին, երբ Պոլիս դեռ չէր հասած նման մշակութային մակարդակի (Robert H. Hewsen, *Tarihi Kentler ve Ermeniler: İzmir*, ed. Richard G. Hovannisian, «Ege'deki Ermeniler», չեւ.: Aras Ergüneş, Aras Yayincılık, 2018, İstanbul, էջ 51. նաեւ՝ Vahé Ochagan, «L'Ecole des Traducteurs Arméniens de Smyrne au XIXe Siècle», *Haigazian Armenological Review*, 4:1973, էջ 199-216):

Զմիւռնիոյ մէջ լոյս տեսած է Օսմանեան Կայսրութեան առաջին ազգային հայկական թերթը՝ *Արշալոյս Արարաւորեան*: Աւելի ետք, վերջինս՝ *Տաղիկի* եւ *Արեւելեան մամուլի* նման թերթերու հետ իր շուրջ կը հաւաքէր մտաւորականները եւ կը նպաստէր ազատական գաղափարներու տարածման ու ժամանակակից արեւմտահայերէնի զարգացման:

Վահէ Օշական արժէքաւոր տեղեկութիւններ կու տայ կատարուած թարգմանական աշխատանքներու վերաբերեալ: Ըստ իրեն՝ 1843-93 յիսնամեակին հրատարակուած են անլիք քան հարիւր հատոր թարգմանեալ գիրքեր, որոնց հեղինակներուն շարքին են Ֆենելոն, Շաթոպրիան, Մոլիէր, Վիքթոր Հիլօ, Ռասին, Լամարթին, Կեօթէ, Վոլթեր, Շէքսպիր, Պոկաչիօ (Ochagan, էջ 199-216):

²⁹ Այս դպրոցը բացուած էր 1820ին, բայց մինչեւ 1840ականները չէր կրցած ունենալ իր սեփական շէնքը (Albert Kharatian, *Tarihi Kentler ve Ermeniler: İzmir*, ed. Richard G. Hovannisian, Ortaçağ'dan Tanzimat Dönemi'ne Kadar İzmir ve Ege Bölgesindeki Ermeniler, չեւ.: Aras Ergüneş, Aras Yayincılık, İstanbul, 2018, էջ 86:

³⁰ Արտաշէս Կարինեան, «Արեւմտահայ լուսաւորիչներ 60-70-ական թուականներին», *Տեղեկագիր Հայկական ՍՍՌ ԳԱ*, 6-7:1944, էջ 35:

³¹ Նոյն:

հրատարակել յայտնի եգիպտագետ Շամփոլիոնի տախտակը «Եգիպտական նշանագիրք» վերնագիրով³²:

Կոստանդեան գրական գործունեության կը լծուի շատ երիտասարդ տարիքին: Անոր առաջին գիրքը՝ *Սիպել կամ բնական գիտության պիտանի մասերուն համառոտ պատմությունը*, կը յիշատակուի 1856 Ապրիլ 11ին *Մասիսի* մէջ տպագրուած գովազդի մը մէջ: 1858ին ան կը սկսի հրատարակել *Հասարակաց Թանգարան* (ֆրանսերէն ենթավերնագիրով՝ *Bibliothèque Populaire*) գիտահանրամատչելի շարքը, որ բաղկացած էր 16 գրքոյկներէ: Կոստանդեան հետաքրքրուած էր նաեւ երաժշտութեամբ. ան լաւ դաշնակահար մըն էր³³:

Կոստանդեան աշխատակցած է *Միութիւն* եւ *Ծաղիկ* ամսաթերթերուն: Ան անդամակցած է Փարիզի *Société Asiatique de Paris*³⁴ ընկերակցութեան եւ Մեամէրականութեան³⁵ միութեան: 1860ականներուն գրած յօդուածները ցոյց կու տան անոր հետաքրքրութիւնը ոգեպաշտութեան հանդէպ: Ան կը ձեռնարկէ հանրագիտարանային բառարան մը պատրաստել, բայց չի կրնար իրագործել: Գ. Փափագեանի հետ 1869ին կը հիմնէ «Հայ Ընթերցատուն»ը, որուն նախագահը կ'ըլլայ երկար տարիներ³⁶:

Կոստանդեան նաեւ թարգմանիչ էր: 1855ին Մեսրոպեան վարժարանի *Թութակ Հայկազեան* ամսաթերթին մէջ լոյս կը տեսնէ անգլերէնէ կատարուած իր թարգմանութիւնը *նշանախօս վարժապետը* խորագրեալ³⁷: Թարգմանական աշխատութիւնները կը հրատարակուին նաեւ այլ պարբերականներու մէջ: 1860ին Հաշտենից Միութեան³⁸ պաշտօնաթերթին առաջին համարին մէջ որպէս թերթօն կը սկսի հրատարակել *Féréallի Mystères de l'Inquisition et autres Sociétés Secrètes d'Espagne* գիրքի թարգմանութիւնը՝ *Գաղտնիք հաւատաքննութեան* վերնագրով: 1862 Ապրիլին եւ Մայիսին *Ծաղիկ*ին մէջ կը հրատարակէ Վիքթոր Լանկլուայի³⁹ *Voyage*

³² Գալուստ Կոստանդեան, «Եգիպտական նշանագիրք», *Արեւելք*, 15 Հոկտեմբեր 1855, էջ 251:

³³ Մեսրոպ Նուպարեան. «Գալուստ Կոստանդեան (անձնական յիշատակներ)», *Արեւելեան մամուլ*, թիւ 9, 1 Մայիս 1902, էջ 401-11:

³⁴ *Société Asiatique de Paris* հիմնուած է 1822 ին արեւելագէտներու կողմէ:

³⁵ *Société du mesmérisme de Paris* հիմնուած է 1844ին: Մեամէրականները ուսումնասիրութիւններ կը կատարէին «կենդանի մագնիսականութեան» վրայ:

³⁶ Միքայէլ Յակոբեան, «Գալուստ Կոստանդեան եւ նրա «Մէթոսի վրայ» գիրքը», *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, 3:1979, էջ 48:

³⁷ *Թութակ Հայկազեան*, Մարտ, թիւ 3, 1855, էջ 38-40:

³⁸ 1859ին հիմնուած է Զմիտնիոյ մէջ կրթական եւ մշակութային նպատակներով:

³⁹ Victor Langlois (1829-1869).- ֆրանսացի պատմաբան եւ հնագէտ:

dans la Cilicie et dans les Montagnes du Taurus ճանապարհորդագրության թարգմանությունը⁴⁰:

Կոստանդեան գիտությանը զբաղող բացառիկ մտատրական մըն էր: Ան ունէր գիտաշխատանոց եւ աստղադիտարան: 1878ին, Զմիւռնիոյ մէջ կը հրատարակէ *Մէթոյի վրայ* գիրքը⁴¹, որ հսկայ ազդեցութիւն կ'ունենայ եւ տեղիք կու տայ բոլոր բողոքներու: Այս գիրքը առաջինն էր այն մատենաշարին, զոր ան կը ծրագրէր հրատարակել, բայց յատկապէս պահպանողական շրջանակներէ բարձրացող բողոքներէ ետք հրաժարեցաւ հրատարակել երկրորդը եւ նախընտրեց գրել ֆրանսերէն:

ՄԷԹՈՏԻ ՎՐԱՅ

Կոստանդեանի այս գիրքը կը ներկայացնէ անոր դրապաշտ աշխարհայեացքը: Գիտական մտքի եւ յառաջդիմութեան հանդէպ անոր հաւատքը ակնյայտ է այս աշխատութեան մէջ⁴²: Կոստանդեան, որ կը հետեւէր Քոնֆի եւ Ժամանակաշրջանի դրապաշտներուն, գիտութեան պատմութենէն մէջբերած օրինակներով կը փորձէ ցոյց տալ, որ մարդկութեան զարգացումը կ'ընթանայ դէպի դրապաշտութիւն: Ան իր միտքը կը պաշտպանէ եռանդով: Գիրքը, իր հակակրօնական բովանդակութեան համար, թիրախ կը դառնայ պահպանողականներու յարձակումներուն, մինչ հեղինակը կ'ենթարկուի մեծ ճնշման: Կոստանդեան կը հերքէ ոչ միայն կրօնական, այլեւ բոլոր բնագանցական հայեացքները: Ան յաճախ կը կրկնէ այն համոզումը, որ յառաջդիմութեան կարելի է հասնիլ միայն գիտութեան միջոցով եւ կ'ընդգծէ գիտական մեթոտի կարեւորութիւնը մարդկութեան զարգացման գործին մէջ:

Դրապաշտ ըմբռնում եւ գիտական մեթոտ

Կոստանդեան բացատրութիւններ կու տայ մեթոտին մասին: Կը նշէ, որ մեթոտի «իմաստը» Ժամանակի ընթացքին բարդուած է. փիլիսոփայական կամ մանկավարժական իմաստներ ստանձնած է ան: Ինք նախընտրած է ամէնէն ընդարձակ իմաստով գործածել բառը, զայն նկատելով ճշմարտութեան, իրողութեան եւ յառաջդիմութեան տանող ճամփայ⁴³:

⁴⁰ «Ճանապարհորդութիւն Վիքթոր Լանկլուայի ի Կիլիկիա եւ ի Տաւրոսի», *Ծաղիկ*, 1862, թիւ 29:

⁴¹ Գալուստ Կոստանդեան, *Մէթոյի վրայ*, Ա. հտր., Արեւելեան Գիտական Մատենաշար, տպագրութիւն Եղբարց Տէտէեան, Իզմիր, 1878, 163 էջ

⁴² «Ընկերութիւնը յառած է դէպի յառաջդիմութիւն, դէպի ճշմարտութիւն, ինչպէս որ այսօրը յառած է դէպի վաղը» (*Մէթոյի վրայ*, էջ 160):

⁴³ Նոյն, «Մուտք»: Կոստանդեան մեթոտը կը գործածէ յաճախ եւ անփութօրէն: Երբեմն ան կ'առնչուի պատմական Ժամանակաշրջանի, երբեմն՝ աշխարհագրական շրջանի, երբեմն ալ պատմական դէմքերու: Հետեաբար, ամբողջովին հասկնալի չէ, թէ ան ի՞նչ նկատի ունի մեթոտով: Կ'ակնարկէ տարբեր «մեթոտներ»ու,

Ըստ Կոստանդեանի՝ ԺԹ. դարու յատկանիշը գիտական եւ քննադատական ոգին է, որուն պատմութիւնը կ'ուզէ ուսումնասիրել ինք: Ան կը նշէ, որ «*ինչ որ է կողմնացոյցը նաւուն՝ նոյնն է մէթօրը ուսանողին*»⁴⁴: Նոր Վերածնունդի ծրագիրի մը պէտք ունինք, կ'ըսէ ան, որուն առաջին նպատակը պէտք է ըլլայ գիտութիւնը կատարելագործել, իսկ երկրորդը՝ գիտութիւնը տարածել⁴⁵: Ասոնք «սրբազան ու վեհ» պարտականութիւններ կը նկատէ ան⁴⁶:

Կոստանդեան համոզուած է, որ գիտութիւնը վերջ պիտի տայ պատերազմներուն եւ երջանկութիւն պիտի բերէ մարդկութեան: Ան կը կիսէ ժամանակաշրջանի դրապաշտներու լաւատեսութիւնը: Դրապաշտութիւնը կը տեսնէ որպէս մարդկութեան զարգացման անհրաժեշտ ուղի⁴⁷: Կը բերէ օրինակներ գիտութեան պատմութենէն: Ըստ իրեն, գիտական զարգացումները մարդկութիւնը պիտի փրկէին: Ան կը յուշէ, որ բնագիտութիւնն ու տարրաբանութիւնը զարգացուցած են ճարտարարուեստը, հեռագիրը իրարու կապած է Եւրոպան, Ամերիկան եւ Ասիան, շոգենաւերը ծովերը անցած են, շոգեկառքերը լեռները ծակած են, հիւանդութիւններու դարմաններ գտնուած են, երկրաբանութիւնը եւ օդերեւութաբանութիւնը զարգացած են, շոգեշարժ մեքենաները կատարելութեան հասած են եւն.: Միջազգային արուեստահանդէսները այս բոլորին պսակը կրնան համարուիլ: Փետթալոցցիի⁴⁸ եւ Ֆրէտայէի⁴⁹ դրութեամբ նոր դպրոցներ բացուած են՝ գիտական կրթութեան տարածման համար: Կոստանդեան կը հաւատայ, որ ԺԹ. դարը այլեւ մարդու իշխանութեան դարն է, իսկ այդ ամբողջ յառաջդիմութիւնը կը պարտինք գիտնականներուն: Եւ դեռ, կը նշէ ան, թէ կը շարունակուին գիտական միութիւններ հիմնուիլ, գիտական հանդէսներ հրատարակուիլ, նոր գիտեր կատարուիլ: Կոստանդեան կը հաւատէ. «*ներհակ բնազանցներու ըսածին, մեթօրը գիտութեան կը խառնուի եւ գիտութիւնը մեթօրի*»⁵⁰:

ինչպէս՝ մարդաբանական, արեւելեան, հնդկական, յունական, դրապաշտական, յունահռոմէական, արաբա-մաւրիտանական, Յիսուսի սիրոյ, կրակի, դիտարկման եւ փորձառական, հոռովմէական, բնազանցական եւն.:

⁴⁴ Նոյն, «Մուտք»:

⁴⁵ Նոյն, էջ 157:

⁴⁶ Նոյն, էջ 158:

⁴⁷ «Ինչպէս որ մագնասեղը բեւեռի կը նայի՝ նոյնպէս եւ մարդկութեան ընտրագոյն զարգացումը դատապարտուած է դրականութեան դիմելու՝ քիչ շատ միջին աստիճաններէ անցնելով», նոյն, էջ 159:

⁴⁸ Johann Heinrich Pestalozzi (1746-1827).- զուիցերիացի մանկավարժ եւ կրթական բարենորոգիչ:

⁴⁹ Friedrich Froebel (1782-1852).- գերմանացի մանկավարժ:

⁵⁰ *Մէթօրի վրայ*, էջ 103-105:

Կոստանդեանի համաձայն, մեր մանկության, պատանության, երիտասարդության, ծերության շրջաններուն պէս մարդկութիւնն ալ ունի շրջաններ՝ իւրաքանչիւրը իւրայատուկ մեթոտներով եւ կարողութիւններով: Ի տարբերութիւն Քոնթի, ան մարդկութեան մտքի զարգացումը չորս շրջանի կը բաժնէ⁵¹.- բնագոյային, հաւատական, տրամաբանական (rationnel) եւ գիտական:

Ըստ Կոստանդեանի, նախապատմական վայրենի ժամանակաշրջանները կը համապատասխանեն «բնագոյային» շրջանին: Այս ժամանակահատուածը կ'արտացոլէ մարդու մանկութեան փուլը, երբ մարդիկ նկատի կ'առնէին միայն իրենց ամէնօրեայ կարիքները: Գիրի գիտով այս շրջանը կ'աւարտի: Երկրորդ շրջանի յատկանիշը զգայուն եւ միամիտ միտքն է: Կոստանդեան այս շրջանը կ'անուանէ «հաւատական», որուն ընթացքին հանդէս կու գան հնդեպոպական կրօնքները: Պրահմա, Օսիրիս եւ համազօր աստուածներ հանդէս կու գան: Աստուածներու բազմութիւնը, երկնային իշխանութեան մը երկրային հնազանդութիւնը, անիմանալի եւ անպէտք «խորհուրդներ» ու երգեր կը յատկանշեն այս շրջանը: Այս շրջանի մեթոտներն են կրօնքը, հրաշքները եւ բանաստեղծութիւնը: Այս շրջանը կ'աւարտի հելլենական արշալոյսով Ք.ա. է. դարուն: Իսկ երրորդ շրջանը աւելի «նուրբ ձեւեր» ունի եւ կը սկսի յոյներով: Կոստանդեան դիտել կու տայ, որ այս շրջանին երեակայութիւնը կը մեղմանայ, իսկ աստուածները կ'աննիւթանան: Տարակոյսը կը դրդէ մտածել, քան հաւատալ⁵²: Ան այս շրջանը կ'անուանէ «տրամաբանական», զոր կը գործածէ բնագանցականի իմաստով⁵³: Յունաստանի մէջ անհատի տրամաբանական ոգին նկատելի կը դառնայ եւ ամէն ինչ քննադատութեան կ'ենթարկուի: Կոստանդեան կը պնդէ, որ տրամաբանական մեթոտի հետեւանքն է *a priori* բնոյթով սխալ փիլիսոփայութիւն մը, որուն հիմքն են բնագանցական յղացքները: Այս շրջանը կը բնորոշեն անվերջ տրամաբանական կոհները, անհատական սնապարծութիւնը, *սքոլասթիք* համակարգերու աղմուկը, յոյսի ու տարակոյսի վէճը եւ բազմաթիւ գրական գործեր: Տրամաբանական շրջանը կ'երկարի ԺԵ.-ԺԶ. դարեր եւ կ'աւարտի Քոլումպուսով⁵⁴, Պէյքընով ու Կալիլէով: Մտքի չորրորդ եւ վերջին շրջանը՝ «գիտական»ը, կը սկսի Վերածնունդով եւ ցարդ կը շարունակուի⁵⁵:

Կոստանդեան կը նշէ, թէ վերոնշեալ գիտնականներու աշխատութեանց շնորհիւ *սքոլասթիք* կրթութիւնը կը վերջանայ եւ կ'անցնինք բնա-

⁵¹ Քոնթ մտքի պատմութիւնը երեքի կը բաժնէ.- աստուածաբանական, բնագանցական եւ դրական:

⁵² Նոյն, էջ 107-10:

⁵³ Քոնթ այս շրջանը կ'անուանէ բնագանցական:

⁵⁴ Christopher Columbus (1451-1506).- իտալացի երկրախոյզ:

⁵⁵ Նոյն, էջ 110-11:

կան գիտություններու շրջանին, որ կը կոչուի «գիտական շրջան»: Այս շրջանին հաւատականութիւնը կ'անհետանայ, հրաշքները կը բացատրուին եւ եսապաշտ պատմաբանը կը զգաստանայ, ու մարդը կը սկսի իրական եղելութիւնները տեսնել, վաւերացնել ու վերլուծել, ինչ որ ցոյց կու տայ դրական շրջանի մը սկիզբը. «Ըսել է՝ մարդս նախ **կ'զգայ**, ետքը **կը հաւարայ**, ետքը **կը տրամաբանէ** ու **կը գիտնայ**, հոգեբանական կամ ուղեղի չորս տեսակ կարողութեանց դասակարգութիւն մը յայտնելով»⁵⁶, կը գրէ ան: Արտաքին աշխարհի հեղինակութիւնը, փորձը, աշխատութեան ու ճարտարարուեստի յաղթանակը, ընկերային ընդհանուր բարօրութիւնը այս շրջանի յատկանիշներն են⁵⁷:

Կոստանդեանի համոզմամբ, ի տարբերութիւն նախկին մեթոտներու, գիտական մեթոտը հիմնուած է եղելութիւններու վրայ՝ փոխանակ գիրքերու եւ գաղափարներու: Ան կը լքէ իտէական եւ *a priori* համոզումները եւ կը դիմէ արտաքին աշխարհին, ուր կարելի է գտնել եղելութիւնները: Գիտական մեթոտը կը յառաջանայ մակաճութեամբ. առաջին պատճառները չ'ուսումնասիրել, այսինքն բնագանցական հարցումներով չի զբաղիր: Ըստ Կոստանդեանի, այս մեթոտը միւսներէն անհամեմատօրէն գերա-զանց է եւ ասիկա կը պարտի իր առարկայականութեան⁵⁸: «Ելեկտրութիւն, ջերմութիւն, թթուածին, ազօտ, ասոնք «բռնաւոր» ու իրական ճշմարտութիւններ են, որոնց նկատմամբ՝ ոչ նախապէս տրամաբանելը ստակ մը կ'արժէ եւ ոչ հաւարալ կամ չի հաւարալ: Անոնք են՝ ու այս եղեւ-լութիւնը բաւ է ամէն վէճ դադրեցնելու, ամէն բերան գոցելու»⁵⁹:

Կոստանդեան կ'ընդգծէ հաւատական եւ տրամաբանական մեթոտներու թերութիւնները եւ ամլութիւնը ու կը պնդէ, որ զգայարանները մեզի աւելի «խելք տուած են» քան մարդկութեան հազարաւոր աստուածները⁶⁰: Ճշմարտութեան հասնելու միակ միջոցը դիտարկութիւն եւ փորձն է⁶¹, կը հաւատայ ան:

Գիտութեան առնչութիւնը կրօնքի, բարոյականութեան եւ իրաւագիտութեան

Կոստանդեան կը պնդէ, որ քրիստոնէութիւնը յետադիմական դեր խաղացած է մեթոտի պատմութեան մէջ: Իր կարծիքով՝ քրիստոնէութիւնը որեւէ դեր չէ ունեցած գիտություններու յառաջացումին մէջ⁶²: Ան կը նշէ թէ

⁵⁶ Նոյն, էջ 114 (ընդգծումները՝ հեղինակային):

⁵⁷ Նոյն, էջ 111-12:

⁵⁸ Նոյն, էջ 142-43:

⁵⁹ Նոյն, էջ 143-44:

⁶⁰ Նոյն, էջ 145-46:

⁶¹ Նոյն, էջ 157:

⁶² Նոյն, էջ 43, տողատակ:

քրիստոնէութեան բնորոշ ոչ մէկ մեթոտ եւ կրթութիւն գոյութիւն ունի, եւ թէ ան հին կրօնական մեթոտներու վերադարձը կամ շարունակութիւնն է, որով քրիստոնէութիւնը նորոգած է միայն այն, ինչ որ կտակուած էր հին ժամանակներէն⁶³:

Կոստանդեան կը մերժէ նաեւ բարոյականութեան եւ կրօնքի միջեւ հաստատուած փոխյարաբերութիւնները: Ան ծիծաղելի կը համարէ կրօնքը ընդունիլ որպէս բարոյականութեան եւ ընկերային փրկութեան պայման: Ըստ իրեն, բարոյականութիւնը յառաջ եկած է աւանդութիւններու, ընտանեկան եւ տնտեսական յարաբերութիւններու հետեւանքով: Իր համոզումը ընկերային զարգացման նկատմամբ՝ ակնյայտ է այստեղ: Ան կրօնքը կ'ընդունի ոչ թէ իբրեւ անփոփոխ գաղափարներու համակարգ, այլ՝ ընկերային զարգացման արդիւնք. կը պաշտպանէ այն միտքը, թէ կրօնքը մարդուն իծնէ տրուած չէ:

Կոստանդեան խիստ քննադատութիւններ կ'ուղղէ կրօնականներուն, պնդելով, որ անոնք հակագիտական եւ անբարոյական սովորութիւններու աղբիւր են: Անոր կարծիքով, կրօնականները սուրբ համարուող բաները կը ծախեն, ոսկիէ եւ մարմարէ եկեղեցիներ կը կառուցեն: Մարդիկը կը շահագործեն յանուն «երկնային իրաւունքներու» պաշտպանութեան⁶⁴, եւ բարոյական կեղծ արդարացումներով թաքցուցած են իրենց շահերը՝ տգէտ պահելով ժողովուրդը⁶⁵: Կոստանդեանի համաձայն, կրօնական պնդումները ապացոյցի կարիք ունին:

Կրօնը կը ստիպէ, ոչ թէ «բարին բարիի համար» ընել՝ այլ անորոշելի վարձի մը յուսով ու սոսկալի պատիժի մը երկիւղի: Եւ ընդունինք պահ մը, թէ անպատճառ երկնային **Անձի** մը հեղինակութիւնը ու դժոխի մը վախը պէտք է, որպէս զի բարոյականը **հիմ** մը ունենայ, բայց ասով խնդիրը չի լուծուիր, կը մնայ դարձեալ գիտական ճշմարիտ փաստերով ցուցնել, թէ իրօք այն **Անձը** գոյութիւն ունի, եւ թէ դժոխքի կաթսաները կատարելապէս կը գործեն⁶⁶:

Կոստանդեան, ի տարբերութիւն ժամանակակից օսմանեան թուրք մտաւորականներու եւ դրապաշտ Տէմիրճիպաշեանի, համոզիչ չի գտներ կրօնքը եւ գիտութիւնը հաշտեցնելու ջանքերը: Թուրք մտաւորականները կը փորձէին ցոյց տալ, որ գիտութեան եւ կրօնքի միջեւ հակասութիւն չկայ՝ հաշուի առնելով ժողովուրդի զգայնութիւնը: Նոյնպէս ալ Տէմիրճիպաշեան՝ հակառակ անոր որ երբեմն հակակրօնական միտքեր արտայայտած է, հաւատարիմ մնացած էր քրիստոնէութեան: Մինչդեռ Կոստանդեան անզիջող էր կրօնքին հանդէպ. «*Յուսալ, թէ կարելի է տակաւին կրօնը գիտութեան յօդել ու հաւասարակշռութեան մը գալ՝ կը նմանի ուղիւ երկա-*

⁶³ Նոյն, էջ 44:

⁶⁴ Նոյն, էջ 161:

⁶⁵ Նոյն, էջ 124-25:

⁶⁶ Նոյն, էջ 124 (ընդգծումները՝ հեղինակային):

թուղիին կապելու, ծառի մը արմատները տերեւներուն խառնելու եւ կամ երէկը այսօր ընելու»⁶⁷ կը գրէ ան:

Կոստանդեանի փիլիսոփայական աշխարհայեացքը

Օսմանեան Կայսրութեան մէջ ժամանակակից արեւմտեան փիլիսոփայութեան ուսումնասիրութիւնները թափ ստացան միայն երկրորդ սահմանադրութեան հռչակումէն (1908) ետք⁶⁸: Կոստանդեանի գործած տարիներուն հրապարակի վրայ կը գտնուէին փիլիսոփայական բնոյթով ոչ-բովանդակակից միջանի թրքերէն գիրքեր: Որպէսզի կարենանք պատշաճօրէն եւ հիմնաւորապէս արժեւորել *Մէթոքի վրայն*, հարկ է նկատի առնել այս իրողութիւնը:

Կոստանդեանի փիլիսոփայական գրութիւնները բովանդակային խորք չունենալով հանդերձ, ցոյց կու տան անոր քաջատեղեակութիւնը իմաստասիրական զանազան բանավէճերու եւ փիլիսոփայութեան պատմութեան⁶⁹: Իր դրապաշտ հայեացքներուն աջակցելու եւ հակակրօնական բանավէճը շարունակելու համար Կոստանդեան կը դիմէ մեծամասնութեամբ գիտական բնոյթ ունեցող բազմաթիւ աղբիւրներու, որոնցմէ մէջբերումներ կը կատարէ: *Մէթոքի վրան* կարելի է կարդալ նաեւ որպէս գիտութեան եւ փիլիսոփայութեան պատմութիւն:

Կոստանդեան, հելլենական մտքին կարեւորութիւն տալով հանդերձ, կը նշէ, որ այս շրջանին մարդը չէ կրցած լքել մտքի ենթակայական աշխար-

⁶⁷ Նոյն, էջ 159-60:

⁶⁸ Այս շրջանին թրքերէն փիլիսոփայական փոքրաթիւ գիրքեր լոյս տեսած են: Միւնիք փաշան (1830-1910), հրատարակած է *Telhis-i Hikmet-i Hukuk* (1884), *Hikmet-i Hukuk* (1885) եւ *Muhaverat-i Hikemiye* (1859) երկերը: Հրատարակած է նաեւ յօդուածաշարք մը՝ «Tarih-i Hükema-yi Yunan» խորագրով, *Mecmûa-i Fünûn* թերթին մէջ: Այս շրջանին Ահմէտ Վեֆիք փաշա (1823-91) ատենի միակ համալսարանի՝ Dârülfünun-ի մէջ, պատմութեան փիլիսոփայութիւն դասաւանդած է. իր դասերը 1863ին որպէս յօդուածաշարք հրատարակուելէ ետք վերածուած են գիրքի: Ահմէտ Միտհաթն (1844-1912) ալ, 1872ին իր հիմնած *Dağarcık* պարբերաթերթով զանազան փիլիսոփայական նիւթերու կողքին, բարեշրջական դպրոցի մասին տեղեկութիւններ տուած է: Գրած է *Schopenhauer* խորագրեալ գրքոյկ մը: Ալի Սուափի (1839-78) *Ulûm* թերթին մէջ յոյն փիլիսոփաներու մասին տուած տեղեկութիւններն ալ օսմանեան փիլիսոփայութեան պատմութեան տեսանկիւնէն արժէք կը ներկայացնեն: Սուափ թարգմանած է նաեւ Սոկրատի աշակերտ Kiyotiyosի պատկանող երկխօսութիւն մը, որ հրատարակուած է 1867ին (Ճան Էրզուրումլուօղլու, «Եղիա Տէմիրճիպաշեանի դրական փիլիսոփայութեան արժեւորումը օսմանեան փիլիսոփայութեան պատմութեան մէջ (1840ականներէն սկսեալ)», *Հայկազեան հայագիտական հանդէս*, Խ:2020, էջ 656-57):

⁶⁹ Կոստանդեան գրած է Քանթի, Հեկէլի, Տեքաթի, Արիստոտէլի, Պլատոնի, Սփինոզայի, Պէյքընի, Վոլթերի, Տարուինի, Քոնթի, Միլի, Լիթերի, Տրէյփըրի, Ռենանի, Վոլթի, Պաքլի, Հեկէլի, Պիլսոնի, Սփենսըրի մասին:

իը ու «*տարերաց անանձնության (impersonnalité) մեծ գաղափարին հասնի*»: Ըստ իրեն, այս շրջանի իշխող մտային համակարգը իտեապաշտութիւնն ու բանապաշտութիւնն է: Կոստանդեանի համաձայն այս վերջինը, «*անխզելի կապեր ունի մեր ներքին մութ զգացումներու հետ*»⁷⁰: Ան յատուկ կարեւորութիւն կ'ընծայէ Հիպոկրատին, զոր կը համարէ առաջին փիլիսոփան, որ նշմարած է «*զննական (դիպարկման) մէթոդի*» արժէքը, նախընտրելով քննել իրերը քան գաղափարները⁷¹:

Իսկ «*ճշմարտութեան առաջին նահապաղ*»⁷² Սոկրատ «Գիտեմ միայն այն, որ ոչինչ գիտեմ» ըսելով, ըստ Կոստանդեանի մատնանշած է նախկին մեթոտներու անբաւարարութիւնը եւ հիմնած է փիլիսոփայական տարակոյսը⁷³: Ենթակայական մեթոտի հետեւորդ ըլլալով հանդերձ, Սոկրատ քանդած է աւանդական մտածելակերպը, քննադատելով նաեւ իր ժամանակի աստուածաբանութիւնը: Կոստանդեան կը նշէ, թէ Զեւս, Պրահմա, Եգտ ու Միհրա իրենց լոյսը կորսնցուցած են եւ խիղճը ասոնց տեղը առած է⁷⁴:

Ըստ Կոստանդեանի, Արիստոտել կը հանդիսանայ յոյն իմաստութեան կատարը: Անոր *Օրկանոնը* կրնայ համարուիլ մեթոտի մը կիրառութեան առաջին համակարգուած փորձը: Ան նաեւ ըմբռնած է մակաճութեան կարեւորութիւնը: Սոկրատ եւ Արիստոտել հին աստուածաբանութիւնը հերքեցին տարակոյսի եւ բնագանցութեան միջոցով⁷⁵:

Հելլենական լուսաւորութեամբ սկսող շրջանը տրամաբանական շրջանն է: Իտեապաշտութիւնը կրօնքի հետ նոյնացնող Կոստանդեան, խիստ պայքար կը մղէ անոր դէմ: Կոստանդեանի համաձայն բանապաշտութիւնը աշխարհիկ եւ անհատական կրօնք մըն է: Այս մեթոտը մեկուսացուած է կրօնքէն բայց ոչ՝ բնագանցութենէն⁷⁶: Այսպիսի համակարգերու գլխաւոր սխալը այն է, որ հիմնուած են բնածին գաղափարներու վրայ եւ դատողութիւնը (raison) անկախ ու *a priori* սկզբունք մը ըրած են: Կոստանդեանի կարծիքով, բանապաշտներու մեծամասնութիւնը իտեապաշտներ են եւ այս պատճառով տրամաբանումը դարձած է բառախաղ⁷⁷: Յոյներէն սկսեալ, իտեապաշտները ուրիշ բան չեն ըրած, եթէ ոչ բանակոյ: Ան Պղատոնի իտեաները անհասկնալի կը գտնէ եւ այս բոլորին պատճառը հաւաքաբանութիւն (syllogisme) կը համարէ:

⁷⁰ Կոստանդեան, *Մէթոդի վրայ*, էջ 29:

⁷¹ *Մէթոդի վրայ*, էջ 29:

⁷² Նոյն, էջ 30:

⁷³ Նոյն, էջ 31:

⁷⁴ Նոյն, էջ 30-31:

⁷⁵ Նոյն, էջ 85-87:

⁷⁶ Նոյն, էջ 131:

⁷⁷ Նոյն, էջ 132-133:

Կոստանդեան կ'ակնարկէ միջնադարի անուանապաշտներու եւ իրապաշտներու վիճաբանութեան: Քրիստոնէայ արիստոտէլականները երկուքի բաժնուած էին. իրապաշտներ եւ անուանապաշտներ: Անուանապաշտները համոզուած էին, որ արդարութեան, իրաւունքի նման հանրային (universel) գաղափարները միայն մեր մտքին մէջ գոյութիւն ունին, իսկ ըստ իրապաշտներու՝ անոնք ինքնին իրական գոյութիւններ են՝ անկախ մարդկային միտքէն: Այս խնդիրը լուծելու համար կը դիմէին հաւաքաբանութեան: Ամբողջ միջնադարը այս երկու դպրոցներուն հակաճառութիւններով անցաւ: Հաւաքաբանութիւնը անբաւարար կը մնայ եւ կը սկսին զիրար նզովել: Կոստանդեան, այս տեղեկութիւնները տալէ ետք, կը մերժէ իրապաշտներու այն կարծիքը, թէ գաղափարները իրական պէտք է համարել:

Կոստանդեանի համաձայն, հաւատական շրջանին հետեւող բանապաշտ շրջանը անլի նուրբ միջոցներու կը դիմէ. կռապաշտ ֆէթիշները եւ անձնաւոր երկնային էակները «բարոյական ուժեր» կ'ըլլան, Օսիրիս եւ Եհովա «արդարութիւն» անունը կը ստանան: Հաւատական մեթոտը կրնայ համարուիլ նաեւ բնագանցական⁷⁸: Պատմական օրինակներով Կոստանդեան կը քննադատէ *սքոլասթիք* մեթոտը, որ անտեսած էր դիտարկումը եւ փորձը:

Կոստանդեանի համաձայն, իմացականութեան աղբիւրը ոչ թէ *a priori* ճշմարտութիւններն ու բնածին գաղափարներն են, այլ՝ դիտարկման եւ փորձի վրայ հիմնուած գիտական մեթոտն է, որ իր գերազանցութիւնը կը պարտի առարկայականութեան: Կոստանդեան միտքը կը նմանցնէ աղօրիքի, իսկ ցորենը՝ արտաքին աշխարհի եղելութիւններուն: Զգայարաններով ստացուած ցորենը միտքի միջոցով ալիւրի՝ այսինքն ճշմարտութեան, կը վերածուի: Եթէ ցորեն չըլլայ՝ միտքը կը յոգնի յումպէտս բանելէ եւ վերացականութիւններու կը դիմէ⁷⁹: Արտաքին աշխարհը թողլով՝ ճշմարտութիւնը մտքի մէջ փնտռելը կը նմանի չափելու համար չափերիզը թողլով մարդու բազուկը գործածելուն⁸⁰:

Լիթերէի գորակցութիւնը

Կոստանդեանի «Propagande Scientifique en Orient» վերնագրով նախագիծը կը տպագրուի 1878ի Յուլիս-Դեկտեմբեր ամիսներուն Լիթերէի *La Philosophie Positive* հանդէսին մէջ: Իբրեւ այս յօդուածի մուտք գրած կարճ պարբերութեամբ Լիթերէ կ'ընդգծէ, որ դրական գիտութիւնը արմատապէս պիտի փոխէ Արեւելքի մտածելակերպը եւ զայն պիտի պատրաստէ արեւմտեան քաղաքակրթութեան: Կոստանդեան, որ յօդուածը ստորագրած է՝

⁷⁸ Նոյն, էջ 136:

⁷⁹ Նոյն, էջ 132-33:

⁸⁰ Նոյն, էջ 140:

Constant, կը յայտնէ թէ քաղաքակրթութեան օրրանը հանդիսացող Արեւելքը դարերու նահանջէն ետք կրկին մտած է յառաջդիմութեան ուղին: Ինչպէս այլուր, Արեւելքի մէջ եւս, ամենամեծ չարիքը աստուածաբանական կրթութեան եւ ժամանակավրէպ վարդապետութիւններու պատճառած տգիտութիւնն է, զոր ոչնչացնելու համար անհրաժեշտ է տարածել դրական ճշմարտութիւններ՝ կը նշէ Կոստանդեան: Ասոր համար ալ, ան կը յայտնէ իր մտադրութիւնը՝ պատրաստելու գիտական գիրքեր, առանց ցեղային եւ ազգային խտրականութեան: Այդ նպատակով ստեղծուելիք բարեգործական միութիւն մը, իր նպաստը պիտի բերէ թուրքերուն, քրիստոնեաներուն եւ հրեաներուն: Կոստանդեան կը ձեռնարկէ արեւելեան գիտական մատենաշարի մը հրատարակման: Հայերէն հրատարակուելիք այս շարքին նպատակը նոր գաղափարներու տարածումն էր: Մատենաշարը, բացի փորձառապաշտ դպրոցի փիլիսոփայական գիրքերէն – որոնք ցոյց կու տան արեւմուտքի վեհութիւնը – պիտի ընդգրկէր նաեւ հասարակական գիտութիւններու եւ մարդաբանութեան վերաբերեալ գիրքեր: Այս յառաջդիմական նախաձեռնութեան նպատակն է նոր գաղափարներու տարածումը Արեւելքի մէջ եւ Օսմանեան Կայսրութիւնը ենթարկել գիտութեան՝ Եւրոպայի ամենամեծ ուժի ազդեցութեան: Մատենաշարին առաջին գիրքը տպագրուած *Մէթօրի վրան* էր: Կոստանդեան տառապող եւ տգիտութեան մատնուած մարդոց անունով կոչ կ'ընէ մարդու փրկութեան համար աշխատող եւրոպացի մտաւորականներուն⁸¹:

Նոյն շրջանին, ատենի նշանաւոր գրողներէն Ստեփան Ոսկանեան կը հրատարակէ ֆրանսերէն գրքոյկ մը՝ *August Comte à Smyrne et l'Athéisme*⁸², ուր կը քննադատէ Կոստանդեանը: Ոսկանեանի քննադատութիւնները կը գնահատուին Զմիւռնիոյ Լատին Եկեղեցւոյ առաջնորդին կողմէ⁸³:

Լիթրէ ի պատասխան Ոսկանեանի գրքոյկին, կը յայտնէ, որ ճշումներ գործադրուած են Կոստանդեանի վրայ, վերջինիս գիրքին տպագրութենէն ետք: Հոգեւորականները հետապնդած են Կոստանդեանը, այրուած են անոր գիրքերը, Զմիւռնիոյ եւ Պոլսոյ թերթերը յարձակած են անոր վրայ: Լիթրէի փոխանցմամբ, ըստ Ոսկանեանի, Կոստանդեան մեղք գործած է, քանի որ Աստուածաշունչը կը տեսնէր ոչ թէ որպէս Աստուծմէ ներշնչուած գիրք, այլ՝ որպէս մարդկային արտադրանք: Լիթրէ իր յօդուածի վերջին

⁸¹ «Propagande Scientifique en Orient», *La Philosophie Positive*, Յովիս-Դեկտեմբեր, Paris, 1878, էջ 304-306:

⁸² E. Oscan, *August Comte à Smyrne et l'Athéisme*, Զմիւռնիա, 35 էջ: Այս գրքոյկի բովանդակութեան կը հետեւինք Յակոբեանի նշուած յօդուածին միջոցով:

⁸³ Յակոբեան, էջ 52:

մասով Կոստանդեանը արժանի կը նկատէ քաջալերութեան եւ զօրակցութեան⁸⁴:

Ոսկանեան Լիթրէին կը պատասխանէ *Litré et Atheisme* յօդուածով, ուր կը նշէ, որ հայերը բացի եկեղեցիէն այլ յենարան չունին եւ կը քննադատէ դարձեալ Կոստանդեանի եւ Լիթրէի անաստուածութիւնը⁸⁵:

Մամուրեանի քննադատութիւնները

Մամուրեան, որ նաեւ Կոստանդեանի բարեկամն էր, *Մէթոդի վրային* հրատարակութենէն ետք, *Արեւելեան մամուլի* մէջ հինգ շարունակելիով յօդուածաշարք մը կը հրատարակէ: Ան կը յայտնէ, որ գիրքը «անախորժ» տպաւորութիւն կը թողու եւ չի յարգեր հակադիր տեսակետերը: Կը քննադատէ մեթոտի օգտագործումը տարբեր իմաստներով եւ գիրքը կը տեսնէ որպէս մարդկային մտքի պատմութիւն⁸⁶, «եւ չէ թէ գործիք մը, *organon* մը, *criterium* մը ճշմարտութեան առաջնորդ»⁸⁷:

Մամուրեան Կոստանդեանի ոճը կը նմանցնէ ոչ թէ Լիթրէի ուսանողի, այլ՝ աստուածաբան հոետորներուն: Ըստ իրեն, Կոստանդեան ոգեբանական, բանաւորական, գիտական եւ ուրիշ իրարու ներհակ դպրոցներ իրեն առաջնորդ կ'ընդունի եւ կը դատապարտէ բարոյական, կրօնական, իրաւագիտական եւ ազգային բոլոր տեսակի սկզբունքները: Ան կը պնդէ, որ նշեալ գիրքը աւելի բաւիղ մըն է, որուն մէջ հասարակ ընթերցողը կը կորսուի, քան՝ ուղեցոյց, բացատրելով թէ իւրաքանչիւր քայլի՝ կը հանդիպինք կնճռոտ խնդրի, մինչ կենսագրական եւ պատմական տեղեկութիւնները կը խառնուին ծանր գիտական խնդիրներու:

Մամուրեան կը նշէ նաեւ, որ հեղինակը չ'առաջարկեր ազգի հիմնական խնդիրներու շօշափելի լուծումներ՝ այլ նպատակ ունի վերացական գիտական բարիքը պաշտպանել: Իր կարծիքով, Կոստանդեան կը հեգնէ կրօնական հաւատքը՝ յատկապէս քրիստոնէութիւնը: Մամուրեան կը յիշեցնէ Կոստանդեանի այն մտքերը, թէ խղճի ազատութիւնը գիտական զարգացումի արդիւնք է եւ կ'ընդգծէ, որ անոր խօսքն ու գործը հետետողական չեն:

Շարունակելով իր քննադատութիւնները, Մամուրեան կը հարցադրէ՝ ի՞նչ հարկ կայ հաւատը **տղայական, անհեթեթ, ծիծաղելի սկզբունք** անուանել, [...] ինչու՞ քարկոծել քրիստոնէութիւնն, որ միլիոնաւոր հետետորդներ ունի՝ մինչեւ անգամ այն ժողովրդոց մէջ որ գիտութեամբ եւ երեւելի գիտումներով կը պարծին: Գիտութիւնը ցասկոտ, ջլուտ ու նախանձոտ մոլեռանդ մը չէ որ փա-

⁸⁴ Émile Littré, “Auguste Comte à Smyrne,” *La Philosophie Positive*, Յունուար-Յունիս, 1879, Paris, էջ 313-17:

⁸⁵ Յակոբեան, էջ 56:

⁸⁶ Մատթէոս Մամուրեան, «Մէթոտի վրայ», *Արեւելեան մամուլ*, 1878, թիւ 6, էջ 76-77:

⁸⁷ Նոյն էջ 77:

փաքի ամէն հակառակորդ անարգել, հալածել ու այրել **զահելու** համար, այլ հանդարտ, համբերատար, ժիր ու անյողորդ ուսուցիչ մ'է որ գտնել, կրթել ու լուսատրել կ'ջանայ, այնպէս որ երբ իր անխոհեմ թարգմաններ իրեն տխուր ու քստմնելի դեր մը տալու կ'ելնեն, զանոնք կ'դատապարտէ⁸⁸:

Մամուրեան կը նշէ, որ մեթոտը կ'անտեսէ յառաջդիմութեան բոլոր ներքին պայմանները, ինչպիսիք են՝ զգացում, շահ, օգուտ, կրօնք, քաղաքական հիմնարկութիւն եւն., իսկ գիտութիւնը կը նկատէ մարդկութեան երջանկութեան միակ դեղամիջոց, որ անխնայ կը քննադատէ գիտութեան սահմաններէն դուրս գտնուողները, յատկապէս հին եւ նոր կրօնքները: Մամուրեան կը քննադատէ նաեւ Կոստանդեանի ըմբռնումը պատմութեան մասին: Ըստ Մամուրեանի, իսկական պատմաբանը պէտք է խառնուի այն մարդոց մէջ, զորս կ'ուսումնասիրէ եւ տեղեակ պէտք է ըլլայ անոնց բարքերուն, հիմնարկութիւններուն, աւանդութիւններուն եւ կիրքերուն եւ այստեղ փնտռէ յառաջդիմութեան սերմը: Բացի այդ, ան պէտք է նկատի առնէ մարդոց կրօնական եւ փիլիսոփայական միտքերը: Մինչդեռ Կոստանդեան մեզի կ'առաջարկէ կիսատ ու տժգոյն պատմութիւն մը: Մամուրեանի կարծիքով, մեծ յանդգնութիւն է ճշմարտութեան մասին բացարձակ ոճով քարոզել՝ առանց նկատի առնելու պատմական, բնական, գերբնական, բարոյական եւ ընկերաբանական հարցերու շուրջ առկայ անորոշութիւնները: Մամուրեան կը նշէ նաեւ, որ տարակարծութիւններ կան դրապաշտ դպրոցին մէջ, որուն հետեւորդն է Կոստանդեանը, որ ինչպէս օտարասէր հայերը, կ'օրինակէ այս ծուռ դրութիւնը: Մամուրեան Կոստանդեանը կը համարէ «*հայոց մէջ գիտութեանց բռնակալ մը*»⁸⁹:

Մամուրեան կը քննադատէ նաեւ Քոնթը. մարդկութեան յառաջդիմութեան ընթացքի բաժանումը շրջաններու եւ իւրաքանչիւր շրջանի համար առանձին զարգացում վերագրելը կը համարէ անելի ենթադրութիւն, քան՝ ճշմարտութիւն: Ժողովուրդները չունին բացարձակ աստուածաբանական, բացառապէս բանական կամ գիտական շրջաններ: Ըստ իրեն՝ այս բոլորը տարբեր չափերով գտնուած են տարբեր ժամանակաշրջաններու մէջ: Քննադատող կրօնական համակարգերը անցեալին ընդլայնած են նաեւ գիտութեան հորիզոնը: Մամուրեան կը փոխանցէ Սփենսըրի այն միտքերը, թէ գիտութիւններու պատմական զարգացումը տեղի չէ ունեցած յաջորդականութեամբ, այլ՝ միասնական յառաջդիմութեամբ: Մամուրեան կրօնքի վերաբերեալ Կոստանդեանի դատողութիւնները կը համարէ ծայրայեղ, նշելով որ հին ազգերու մէջ կրօնքը եւ գիտութիւնը իրարմէ անջատ չէին: Քրիստոնէութեան պատմութիւնը ունեցած է տխուր ու արինալի է-

⁸⁸ Մատթէոս Մամուրեան, «Մէթոտի վրայ», *Արեւելեան մամուլ*, 1878, թիւ 8, էջ 125-33:

⁸⁹ Մատթէոս Մամուրեան, «Մէթոտի վրայ», *Արեւելեան մամուլ*, 1878, թիւ 9, էջ 198-202:

ջեր ու դէպքեր, սակայն այս դէպքերը «ոչ այնքան քրիստոնէական զուր սկզբանց հետեւութիւններ են որքան անոնց տրուած թիւր մեկնութեանց, պաշտօնէից տգիտութեան, մոլեռանդութեան ու մարդկային կրից արհիւնքն են»⁹⁰, կը գրէ Մամուրեան իր յօդուածաշարքին մէջ:

Մամուրեան կը նշէ, որ կրօնքի ազդեցութիւնը դեռ կը շարունակուի Եւրոպայի քաղաքական եւ գիտական հաստատութիւններու մէջ. կրթական հաստատութիւններու ծրագիրներու մէջ գիտական գիտերու կողքին տեղ կը տրամադրուի նաեւ ասանդական պատմութիւններու: Մամուրեան Եւրոպայի հաստատութիւններու նշեալ վիճակը «գրեթէ հակասական» համարելով հարց կու տայ. «միթէ խեղճ Հայոց մնացած է **հիմնովին** լեղաշրջել իրենց արդի կենաց պայմաններն եւ Մէթոքի հեղինակին յատկագիծն 'ի գործ դնել»⁹¹:

Մամուրեանի համաձայն, Կոստանդեան նկատի չ'առնել պատմական բարեշրջութեան օրէնքը: Ըստ Կոստանդեանի՝ ազգի համար վնասակար է հայերու կրօնական հաստատութիւնները եւ պատմութիւնը հարուածել, քանի որ հայերը այս միջոցներով կը ջանան կարեւորութիւն, համակրանք եւ պաշտպանութիւն ստանալ Եւրոպայէն՝ կարելի դարձնելով իրենց ազատութիւնն ու յառաջդիմութիւնը: Մամուրեան կ'ընդգծէ Կոստանդեանի գաղափարներու հաւանական ժխտական հետեւանքները քաղաքական դաշտի վրայ: Ան կ'աւելցնէ նաեւ, որ մինչ հայ եկեղեցիի եւ հայկական հարցի ներկայացուցիչ Խրիմեան կը պաշտպանէր հայերու իրաւունքները, Կոստանդեան կը վիրաւորէ ժողովուրդի զգացումները եւ կը տապալէ հիմքը անոր ազատութեան ձգտումին⁹²: Մամուրեան անժամանակ կը նկատէ Մէթոքի հրապարակումը:

Եզրափակելով իր յօդուածաշարքը՝ ան Կոստանդեանին խորհուրդ կու տայ ուսումնասիրել մարդոց ներկայ կեանքը, նիւթական եւ բարոյական վիճակը եւ հրատապ կարիքները⁹³:

Ճորճ Վուդի (George Wood) քննադատութիւնները

Երիցական քարոզիչ Ճորճ Վուտ (1824-1901), «*Երեւելի ազգասէր անձեռէ*» ստացած հրաւերին ընդառաջելով կը գրէ հայերէն քննադատութիւն մը Մէթոքի վրային մասին⁹⁴: Ասիկա փաստ մըն է թէ որքա՛ն ազդեցիկ եղած

⁹⁰ Մատթէոս Մամուրեան, «Մէթոքի վրայ», *Արեւելեան մամուլ*, 1878, թիւ 12, էջ 323-27:

⁹¹ Մատթէոս Մամուրեան, «Մէթոքի վրայ», *Արեւելեան մամուլ*, 1879, թիւ 1, էջ 345:

⁹² Նոյն, էջ 342-347:

⁹³ Նոյն:

⁹⁴ George Warren Wood, *Քննութիւն Մէթոքի վրայ գրքոյկին ուղղեալ առ ուսումնասէր եւ ողջամիտ հայ երիտասարդաց*, Արամեան տպարան, Կոստանդնուպոլիս, 1882, 137 էջ: Մեր ունեցած գիրքի օրինակէն կարելի չ'եղաւ ստուգել հեղինակը:

է Կոստանդեան: Վուտի գիրքը նաեւ ապացոյց է, որ Կոստանդեանի գիրքին շուրջ բանավէճերը կը շարունակուէին նաեւ անոր հրատարակութենէն 4 տարի յետոյ: Վուտ կը շօշափէ այնպիսի թեմաներ՝ ինչպէս բարեշրջում, նախամարդը, յառաջդիմութիւն եւլն.: Ան կը փորձէ ցոյց տալ, թէ կրօնքը չի հակասեր գիտութեան:

Վուտի գիրքի ազդին մէջ գրուած է, որ անոր նպատակը օգտակար տեղեկութիւններ տալ է, քան՝ Կոստանդեանին պատասխանել: Կը նշուի նաեւ, որ ազգասէր հայոց համար ամենակարեւոր խնդիրը այն է, թէ ինչպիսի գիտութեամբ կարելի է հասնիլ յառաջդիմութեան:

Վուտ Կոստանդեանի գիրքը քննադատելով, կը նշէ, որ *Մէթոյն* ու անոր հետեւութիւնները կը թանձրացնեն խաւարը Արեւելքի մէջ, եւ թէ՛ իր նպատակը երիտասարդները զգուշացնելն է⁹⁵:

Վուտ բարձր կը գնահատէ գիտութիւններ սորվելու Կոստանդեանի կիրքը, բայց կը քննադատէ անոր գիրքերու ընտրութիւնը: Ան նաեւ կը նշէ, որ Կոստանդեան գիրքերը ճիշտ չ'օգտագործեր: Վուտ կը բացատրէ թէ բնական գիտութիւններու սկսնակները, սահմանափակ գիտելիքներով բաւարարուելով կ'իյնան անկրօնութեան անդունդը⁹⁶, ու կը հաւաստէ թէ կէս-ճշմարտութիւններու խառնուած են խոշոր սուտեր⁹⁷: Ըստ Վուտի, Կոստանդեան կը շփոթէ սնապաշտութիւնն ու իրական կրօնքը եւ այս պատճառով անիրատւութիւն կը գործէ ճշմարիտ կրօնքին հանդէպ⁹⁸: Քրիստոնէութեան վերագրուող չարիքներու պատճառը անոնք են, որոնք կը գործեն Աւետարանի ոգիին հակառակ⁹⁹: Պատասխանելով Կոստանդեանի բնագանցութեան ուղղուած քննադատութիւններուն, Վուտ կը նշէ, թէ ան «*Կը ծաղրէ եւ կ'արհամարհէ բնագանցական գիտութիւնն, բայց շարունակ մէջ կը բերէ իւր բնագանցութիւնը որ սուր եւ ծաղրելի է*»¹⁰⁰:

Վուտի կարծիքով, Կոստանդեան գաղափարներու, պատճառներու, սկզբունքներու կարեւորութիւնը կը մերժէ եւ կը խօսի այնպէս, իբրեւ թէ չկայ իրականութիւն բացի նիւթական իրերէն: Հուսկ, կը պատասխանէ Կոստանդեանի բնածին գաղափարներու ուղղուած քննադատութիւններուն, ուշադրութիւն կը դարձնէ կարգ մը *a priori* սկզբունքներու գոյութեան: Վուտ հակաճառելով Կոստանդեանին, որ կը հաւաստէր, թէ դատողութիւնը (*raison*) անկախ եւ *a priori* չի կրնար ըլլալ, կ'առարկէ, որ բանը պէտք է մեկնաբանէ զգայութիւնները: Վուտի համաձայն մտքի գոյու-

Յակոբեան իր վերոյիշեալ յօդուածին մէջ որպէս հեղինակ նշած է Woodի անունը (էջ 52):

⁹⁵ Նոյն, էջ 6:

⁹⁶ Նոյն, էջ 13:

⁹⁷ Նոյն, էջ 16:

⁹⁸ Նոյն, էջ 17:

⁹⁹ Նոյն, էջ 18:

¹⁰⁰ Նոյն, էջ 18:

թիւնը անելի ստոյգ գիտենք քան նիւթի գոյութիւնը եւ հարց կու տայ. «*հար գոյութեան գիտակից եւ խորհող հոգիս չէ՞ այնչափ գիտակից եւ իրական որչափ ծառն որ առարկայ է խորհրդոյս*»¹⁰¹:

Ըստ Վուտի, կրօնքի եւ գիտութեան ենթադրեալ հակասութիւնները կը բխին կրօնքի սխալ մեկնաբանութենէն¹⁰², ու կ'աւելցնէ թէ Կոստանդեան կը հետեւի անաստուած փիլիսոփաներուն, եւ թէ՛ ան չէ ուսումնասիրած Նոր Կտակարանի մէջ պատմուած Յիսուսի վարդապետութիւնը եւ կեանքի պատմութիւնը¹⁰³:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Գալուստ Կոստանդեան, Եղիա Տէմիրճիպաշեանի հետ, եղած է Օսմանեան Կայսրութեան մէջ դրապաշտական մտքի ջահակիրներէն: Ի տարբերութիւն Տէմիրճիպաշեանի, ան խզեց բոլոր կապերը բնագանգական մտքի հետ, խստօրէն համոզուած ըլլալով, որ գիտութիւնը կրնայ լուծել բոլոր խնդիրները: *Մէթոդի վրան* կրօնքի եւ բնագանցութեան դէմ մղուած գրչի պայքար մըն է: Կայսրութենէն թէ՛ ներս, թէ՛ դուրս գիրքին գտած արձագանգը, անոր մասին տեղի ունեցած բանավէճերը արդէն յոյց կու տան Կոստանդեանի ազդեցութիւնը:

THE POSITIVIST VIEWS OF KALOUST GOSDANTIOAN AND HIS ROLE IN THE HISTORY OF OTTOMAN PHILOSOPHY

(Summary)

CAN ERZURUMLUOGLU (canerzurumluoglu@hotmail.com)

Positivist thought found some echoes within the Armenian circles of Constantinople and Smyrna as of the second half of 19th century.

Positivism promoted positivism against metaphysics and religion. Old norms were to be replaced by new perceptions. Gosdantian Armenian book, *About Method*, is nothing but a promotion of positivist thought. It was an attack against religion and metaphysics. Gosdantian believed that progress is possible only by of defending the scientific mind in an unyielding manner.

The book caused a wave of protests within the conservative circles and Gosdantian was strongly criticized. On the other hand the French positivist philosopher Litre, solidarized with him in his magazine.

As an ottoman citizen the legacy of Gosdantian constitute a part of the history of Ottoman philosophy. Indeed, alongside Demirdjibashian, GFosdnatian was onew of the very first positivist thinkers of the Ottoman Empire.

¹⁰¹ Նոյն, էջ 23:

¹⁰² Նոյն, էջ 36:

¹⁰³ Նոյն, էջ 89:

